ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 76

Ք. Երևան 8-ը հունվարի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Դավիթ Հայրապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված N 1-ի աղյուսակ N 1-ի՝ 08 բաժնի 04 խմբի 01 դասի «01. Երիտասարդական ծրագրեր» ծրագիրը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, իր կանոնադրությունը, պատվիրում է, իսկ Կատարողը պարտավորվում է կազմակերպել և իրականացնել երիտասարդական ծրագրերի միջոցառումները՝ սույն պայմանագրի անբաժանելի մասերը կազմող N 1 և N 2 հավելվածներին համապատասխան:

2. Կողմերի պարտականությունները

2.1 Կատարողը պարտավորվում է՝

2.1.1 Պատվիրատուի հատկացրած միջոցներով ապահովել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված միջոցառումների կազմակերպումը և իրականացումը,

2.1.2 հատկացված միջոցներն օգտագործել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված միջոցառումների կազմակերպման և իրականացման համար,

2.1.3 ապահովել իրականացվող աշխատանքների հաշվառումը և հաշվապահական հաշվառման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարումը,

2.1.4 մինչև հաջորդող ամսվա 10-ը Պատվիրատուին ներկայացնել նախորդ ամսվա կատարված աշխատանքների վերաբերյալ պահանջվող հաշվետվություններ և այլ անհրաժեշտ տեղեկություններ,

2.1.5 ծախսերի հաստատված նախահաշվում փոփոխության անհրաժեշտություն առաջանալու դեպքում այն նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ,

2.1.6 չծախսված գումարի վերջնական (տարեվերջյան) ազատ մնացորդը վերադարձնել Պատվիրատուին կամ վերջինիս համաձայնությամբ օգտագործել սույն պայմանագրի 1.1 կետի շրջանակներում կազմակերպվող ծրագրերի իրականացման համար:

2.1.7 եռամսյակի ավարտից հետո 10-օրյա (տասնօրյա) ժամկետում Պատվիրատուին ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ պահանջվող հաշվետվություններ՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածի՝ միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումների մշակում, կազմակերպում և իրականացում տողին համապատասխան.

2.1.8 ապահովել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գործընթացի կատարումը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2.2. Պատվիրատուն պարտավորվում է՝

2.2.1 Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ գործնական և մեթոդական օգնություն,

2.2.2 պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքները, մշակել առաջարկություններ գործունեության հետագա ծրագրերի բարելավման վերաբերյալ, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ,

2.2.3 պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրել Կատարողին համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասերը կազմող N 1 և N 2 հավելվածների պայմանների,

2.2.4 զննել և ընդունել սույն պայմանագրի 1.1 կետին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին գրավոր հայտնել Կատարողին:

3. Կողմերի իրավունքները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 հետևել սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված երիտասարդական ծրագրերի շրջանակներում անցկացվող միջոցառումների կազմակերպման ընթացքին և պատշաճ անցկացմանը,

3.1.2 պահանջել Կատարողից վերադարձնել չծախսված գումարի վերջնական (տարեվերջյան) ազատ մնացորդը,

3.1.3 պարբերաբար ուսումնասիրել հատկացված դրամական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործումը և ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը,

3.1.4 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարված Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

3.1.5 իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

3.2 Կատարողն իրավունք ունի՝

3.2.1 Պատվիրատուից պահանջել վերացնել բոլոր այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են Կատարողին լիարժեք իրականացնել իր գործունեությունը սույն պայմանագրի շրջանակներում,

3.2.2 սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված երիտասարդական ծրագրերի շրջանակներում անցկացվող միջոցառումները կազմակերպել և իրականացնել ինչպես անձամբ այնպես էլ երրորդ անձանց ներգրավելու միջոցով,

3.2.3 իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

3.2.4 Պատվիրատուի համաձայնությամբ տվյալ ֆինանսական տողի ծրագրերի իրականացումից առաջացած ֆինասական խնայողություններն ուղղորդել նույն տողի այլ միջոցառումների իրականացման համար:

4. Պայմանագրի գինը և վճարման պայմանները

4.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների գինը կազմում է 167 392.0 հազար (հարյուր վաթսունյոթ միլիոն երեք հարյուր իննսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

4.2 Սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարը Պատվիրատուն փոխանցում է Կատարողին՝ համաձայն N 2 հավելվածում նախատեսված վճարման ժամանակացույցի, N 1 հավելվածով նախատեսված աշխատանքների ծավալների ապահովման դեպքում համապատասխան ստորաբաժանման (ների) կողմից տրված դրական եզրակացության հիման վրա:

4.3 Պատվիրատուն վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Պայմանագրի փոփոխումը, լուծումը կամ դադարումը

6.1 Սույն պայմանագրում փոփոխություններն ու լրացումները կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է: Սույն պայմանագիրը փոփոխելիս և(կամ) լրացնելիս Կողմերի պարտավորությունները պահպանվում են ըստ փոփոխված և(կամ) լրացված պայմանագրի պայմանների (դրույթների):

6.2 Սույն պայմանագիրը լուծվում կամ դադարեցվում է՝

6.2.1 եթե լրացել է պայմանագրի գործողության ժամկետը,

6.2.2 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

8. Վեճերի լուծման կարգը

8.1 Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատական կարգով:

9. Այլ դրույթներ

9.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում կատարվում է գրավոր:

9.2 Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.3 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.4 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	«Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Աբովյան 9	ք. Երևան, Աբովյան 9
h/h 90001159178	«Արարատ բանկ» ՓԲԸ
h/h 90001159319	h/h 1510017358860100
ՀՎՀՀ-02586282	ՀՎՀՀ-02604737
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն
Վ. Էլոյան	Դ. Հայրապետյան
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
08.01.2013թ. կնքված N76 պայմանագրի

ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	Գումարը հազար դրամ			
ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
08.04.01.01. Երիտասարդական ծրագրեր	**34482,8**	**82672,7**	**134396,9**	**167392,0**
«Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ	**34482,8**	**82672,7**	**134396,9**	**167392,0**
այդ թվում				
թվում	**34482,8**	**82672,7**	**134396,9**	**167392,0**
«Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովում	4991,8	14134,6	21622,4	26614,2
Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանում	**25255,0**	**49739,1**	**76392,1**	**94542,4**
այդ թվում				
Երիտասարդական ուսումնասիրությունների կազմակերպում	0,0	800,0	1600,0	1600,0
Երիտասարդական հեռուստահաղորդաշարերի, ֆիլմերի, սոցիալական տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում	2550,0	6700,0	10850,0	15000,0
«Պետական երիտասարդական քաղաքականությունը ՀՀ մարզերում» այցելություն-խորհրդակցությունների կազմակերպում ՀՀ մարզեր	0,0	486,6	1459,8	1946,4
Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և հասարակական կյանքին երիտասարդության մասնակցության խթանմանն ուղղված ծրագրեր	19714,0	34426,5	50821,3	60000,0
Երիտասարդական պետական քաղաքականության մասին էլեկտրոնային տեղեկատվության ապահովում, էլեկտրոնային թերթի հրատարակում	2096,0	5396,0	8696,0	11996,0
Հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում	895,0	1930,0	2965,0	4000,0
Երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում և զբաղվածության հնարավորությունների մեծացում	**0,0**	**0,0**	**4000,0**	**5000,0**
այդ թվում				
ՀՀ մարզերում աշխատանքի տոնավաճառի կազմակերպում	0,0	0,0	4000,0	4000,0
«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի մոնիթորինգի իրականացում, տեղեկատվական-վերլուծական, քարոզչական նյութերի մշակում, ծրագրային առաջարկությունների ներկայացում	0,0	0,0	0,0	1000,0
Երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանում	**0,0**	**0,0**	**0,0**	**1000,0**
այդ թվում				
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների, թմրամոլության կանխարգելման նպատակով երիտասարդների իրազեկության բարձրացմանն ուղղված կրթական-տեղեկատվական միջոցառումների մշակում և իրականացում, նյութերի հրատարակում	0,0	0,0	0,0	1000,0
Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակի բարձրացում և երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության խթանում	**4236,0**	**18799,0**	**32382,4**	**40235,4**
այդ թվում				
Երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում, աջակցություն ԼՂՀ պետական երիտասարդական քաղաքականությանը և հասարակական կազմակերպություններին	0,0	3500,0	5000,0	5000,0
Համահայկական, հանրապետական և միջազգային երիտասարդական միջոցառումների (փառատոներ, համաժողովներ, գիտաժողովներ, սեմինարներ, մրցույթներ, կրթական, հոգևոր-մշակութային, սպորտային) կազմակերպում	1150,0	7584,0	15038,4	19805,3
Միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումների մշակում, կազմակերպում և իրականացում	3086,0	7715,0	12344,0	15430,1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
հ/հ 90001159178

ՀԿՀՀ-02586282
Աշխատակազմի ղեկավար՝
Վ. Էլոյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Երիտասարդական միջոցառումների
իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Աբովյան 9
«Արարատ բանկ» ՓԲԸ
հ/հ 1510017358860100

ՀԿՀՀ-02604737
Տնօրեն՝
Դ. Հայրապետյան

Կ.Տ.

Հավելված 2
08.01.2013թ. կնքված N76 պայմանագրի

«Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի 2013թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝												
	I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացում, այդ թվում	34482,8	34482,8	34482,8	82672,7	82672,7	82672,7	134396,9	134396,9	134396,9	167392,0	167392,0	167392,0	167392,0
Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն ՊՈԱԿ-ի գործունեության ապահովում	4991,8	4991,8	4991,8	14134,6	14134,6	14134,6	21622,4	21622,4	21622,4	26614,2	26614,2	26614,2	26614,2
Միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումների մշակում, կազմակերպում և իրականացում	3086,0	3086,0	3086,0	7715,0	7715,0	7715,0	12344,0	12344,0	12344,0	15430,1	15430,1	15430,1	15430,1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
հ/հ 90001159178

ՀՎՀՀ-02586282
Աշխատակազմի ղեկավար՝
Վ. Էլոյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Երիտասարդական միջոցառումների իրականացման
կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Աբովյան 9
«Արարատ բանկ» ՓԲԸ
հ/հ 1510017358860100
ՀՎՀՀ-02604737
Տնօրեն՝
Դ. Հայրապետյան

Կ.Տ